Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԲՆԱԿԱՐԱՆԸ ՀԱՐԿԱԴԻՐ ՎՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

03.08.2018թ. ք. Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության հարկադիր կատարման օպերատիվ բաժնի գլխավոր խորհրդատու Ա.Իսրաելյանս ուսումնասիրելով թիվ 02470881 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 15.09.2016թ. տրված թիվ ԳԴ/0761/02/16 կատարողական թերթի հիման վրա Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Գեղարքունիքի մարզային բաժնում հարուցված թիվ 02470881 կատարողական վարույթով կատարողական գործողությունների ընթացքում գրավի առարկա հանդիսացող ք. Գավառ Միքայելյան փողոցի թիվ 64 հասցեում գտնվող բնակելի տունը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացվել է:

Գավառ քաղաքի Միքայելյան փողոցի թիվ 64 տան նոր սեփականատեր «ԱյԴի բանկ» ՓԲԸ կողմից Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն հասցեագրված 08.06.2018թ. թիվ 06-136 գրությամբ խնդրվել է վտարել առանց իրավական հիմքերի նշված տունը զբաղեցնող անձանց:

Պարտապան Տիգրան Զախարյանին, ինչպես նաև այն անձանց, որոնց օգտագործման իրավունքը գրանցված չէ օրենքով սահմանված կարգով՝ առաջարկվել է մինչև 10.07.2018թ. ինքնակամ ազատել ք. Գավառ Միքայելյան փողոցի թիվ 64 հասցեում գտնվող բնակելի տունը, սակայն սահմանված ժամկետում հասցեն չի ազատվել:

Հաշվի առնելով, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 64.1 հոդվածի համաձայն՝ հարկադիր աճուրդով օտարված բնակարանի, բնակելի տան և այլ շինության նոր սեփականատիրոջ պահանջով հարկադիր կատարողն իր որոշմամբ պարտավոր է վտարելու բնակարանը, բնակելի տունը կամ շինությունը զբաղեցնող պարտապան սեփականատիրոջը, ինչպես նաև այն անձանց, որոնց օգտագործման իրավունքը գրանցված չէ օրենքով սահմանված կարգով, ուստի.

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 43.1 և 64.1 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Վտարել Տիգրան Զախարյանին, ինչպես նաև այն անձանց, որոնց օգտագործման իրավունքը գրանցված չէ օրենքով սահմանված կարգով՝ Գավառ քաղաքի Միքայելյան փողոցի թիվ 64 տնից:

Որոշման օրինակը ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալուց 10 օրվա ընթացքում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ Ա.ԻՍՐԱԵԼՅԱՆ